Հավելված
ՀՀ կառավարության 2014 թվականի
դեկտեմբերի 11-ի նիստի N 52
արձանագրային որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ կառավարության և Ասիական զարգացման բանկի միջև 2013 թվականի դեկտեմբերի 2-ին ստորագրված՝ ենթակառուցվածքների կայունության աջակցության ծրագրի փոխըմբռնման հուշագրով նախատեսված գործողությունների կատարումն ապահովելու նպատակով ՀՀ վարչապետի 2014 թվականի փետրվարի 24-ի N 134-Ա որոշման հավելվածով հաստատվել է ժամանակացույց: Նշված ժամանակացույցի 2-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջները ապահովելու նպատակով նախաձեռնվել է խմելու ջրի մատակարարման ոլորտի (այսուհետ ոլորտ) հիմնական գերատեսչությունների (ջրային ռեսուրսների և համակարգերի կառավարման, կարգավորման և պահպանման մարմիններ) գործառույթների ուսումնասիրություն և վերլուծություն:

խմելու ջրի մատակարարման ոլորտի հիմնական գերատեսչությունների ջրային ռեսուրսների կառավարման, կարգավորման և պահպանման գործառույթների ուսումնասիրության վերաբերյալ ՀՀ վարչապետի 17.03.2014թ. N 192-Ա որոշմամբ ստեղծվել է աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

Վ. Տերտերյան - ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ (աշխատանքային խմբի ղեկավար)
Ս. Պապյան – ՀՀ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ
Լ. Հունանյան - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Գ. Խաչատրյան - ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահի տեղակալ
Շ. Կիրակոսյան - ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահի տեղակալ
Կ. Արեյան – Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ:

Աշխատանքային խմբի 17.03.2014թ. նիստում հավանություն է տրվել Ասիական զարգացման բանկի կողմից ներկայացված ոլորտի հիմնական գերատեսչությունների միջև տեղեկատվական հոսքերի, դերերի ու պարտականությունների և գործառույթների ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքին: Համաձայն տեխնիկական առաջադրանքի ՀՀ տարածքային

կառավարման նախարարությունը (ՏԿՆ) պետք է ղեկավարի ուսումնասիրությունը և ապահովի ավարտական հաշվետվության ժամանակին հանձնումը:

Գործընթացի շրջանակներում ուսումնասիրվել են ՀՀ ջրային օրենսգրքով և այլ իրավական ակտերով սահմանված խմելու ջրի մատակարարման ոլորտի հիմնական գերատեսչությունների գործառույթները, վերլուծվել են դրանց հնարավոր մասնակի համընկնումներն ու անհամապատասխանությունները, ինչպես նաև բացահայտվել են բարելավման կարիք ունեցող խնդիրներ:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում առանձնացվել են ոլորտի գերատեսչությունների գործառույթների և պարտականությունների վերանայման ենթակա հետևյալ առաջարկությունները՝

ՀՀ գյուղատնտեսության նախարարության
ջրային տնտեսության պետական կոմիտե (ՋՏՊԿ)

ՀՀ կառավարության 04.12.2014թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1346-Ն որոշմամբ ջրային տնտեսության պետական կոմիտեի ենթակայությունը ՀՀ տարածքային կառավարման նախարարությունից փոխանցվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարություն:

1. <u>ՀՀ ջրային օրենսգրքի 12-րդ հոդված 11-րդ կետ</u>

<<Կառավարության կողմից նախատեսված լինելու դեպքում առևտրային գործունեություն իրականացնող կազմակերպություններում ապահովում է պետության բաժնեմասի կառավարման հետ կապված գործառույթները, ներառյալ պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգերի արդյունավետ կառավարման պայմանագրերի կնքումը և ջրային համակարգերի օգտագործման թույլտվությամբ սահմանված պահանջների կատարման վերահսկողությունը.>>:

Առաջարկվում է ՀՀ ջրային օրենսգրքի 12-րդ հոդվածի 11-րդ կետի շարադրանքից հանել <<և ջրային համակարգերի օգտագործման թույլտվությամբ սահմանված պահանջների կատարման վերահսկողությունը.>> բառերը՝ համապատասխան փոփոխություններ կատարելով ՀՀ կառավարության 05.09.2002թ. N 1400-Ն որոշմամբ հաստատված ՋՏՊԿ-ի կանոնադրության 8-րդ կետի (ը) ենթակետում:

<u>2.ՀՀ ջրային օրենսգրքի 12-րդ հոդված 13-րդ կետ</u>

<<Կարգավորվող հանձնաժողովին ներկայացնում է առաջարկություններ՝ կարգավորվող սակագների վերաբերյալ.>>:

Առաջարկվում է ՀՀ ջրային օրենսգրքի 12-րդ հոդվածի 13-րդ կետի <<ներկայացնում է>> բառերի փոխարեն շարադրել <<մասնակցում է ներկայացմանը>> բառերը՝ համապատասխան փոփոխություններ կատարելով ՀՀ կառավարության 05.09.2002թ. N 1400-Ն որոշմամբ հաստատված ՋՏՊԿ-ի կանոնադրության 8-րդ կետի (ժ) ենթակետում:

3. <u>ՀՀ ջրային օրենսգրքի 12-րդ հոդված 14-րդ կետ</u>

<<Կարգավորվող հանձնաժողովին ներկայացնում է առաջարկություններ՝ ջրային համակարգերի օգտագործման թույլտվությունների և դրանցում ներառվող պայմանների վերաբերյալ.>>:

Առաջարկվում է ՀՀ ջրային օրենսգրքի 12-րդ հոդվածի 14-րդ կետի <<ներկայացնում է>> բառերի փոխարեն շարադրել <<մասնակցում է ներկայացմանը>> բառերով:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (ՀԾԿՀ)

<u>1. ՀՀ ջրային օրենսգրքի 73-րդ հոդված</u>

<<***Ջրամատակարարման և ջրահեռացման պայմանագրերը***

<<Ջրամատակարարման և ջրահեռացման պայմանագրերի կնքման կարգը և օրինակելի ձևերը սահմանում է կառավարությունը:>>:

Առաջարկվում է նշված հոդվածում կատարել փոփոխություններ և լրացումներ՝

1) Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման կանոնների հաստատում ՀԾԿՀ-ի կողմից.

2) Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման պայմանագրերի օրինակելի ձևերի հաստատում ՀԾԿՀ-ի կողմից:

Այս մոտեցման պարագայում անհրաժեշտություն կառաջանա ուժը կորցրած ճանաչել ՀՀ կառավարության 01.22.2004թ. N 130-Ն որոշմամբ հաստատված հավելվածները (N1՝ <<Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման կանոններ>>, N2՝ <<Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման օրինակելի պայմանագրի ձևը՝ բնակիչ բաժանորդների համար>> և N3՝ <<Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման օրինակելի պայմանագրի ձևը՝ կազմակերպությունների համար>>), ինչպես նաև անհրաժեշտություն կառաջանա վերախմբագրելու նշված փոփոխություններով պայմանավորված որոշման առանձին դրույթներ:

<u>2.ՀՀ ջրային օրենսգիրք Գլուխ 5</u>

<<Ջրային համակարգերի օգտագործման թույլտվությունը>>

Առաջարկվում է ՀՀ ջրային օրենսգրքի 5-րդ գլխում կատարել համապատասխան փոփոխություններ ու լրացումներ՝ ՀԾԿՀ-ին վերապահելով իրավասություններ Ջրային համակարգերի օգտագործման թույլտվություն ունեցող անձանց կողմից ՀՀ ջրային օրենսգրքի, ջրային համակարգերի օգտագործման թույլտվության պայմանների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու և դրանց խախտման դեպքում պատժամիջոցներ կիրառելու նպատակով:

Եզրակացություն

1. Աշխատանքային խումբը հավանություն է տալիս ուսումնասիրությունների արդյունքներով ներկայացված առաջարկություններին:

2. Առաջարկությունների իրականացման նպատակով անհրաժեշտություն է առաջանում փոփոխություններ և լրացումներ կատարել հետևյալ օրենսդրական ակտերում՝

- ՀՀ ջրային օրենսգիրք.
- Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք:

3. Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ վարչապետի 2014 թվականի փետրվարի 24-ի N 134-Ա որոշման հավելվածով հաստատված ժամանակացույցի 2-րդ կետի 5-րդ ենթակետը նախատեսում է ընդունել ՀՀ կառավարության որոշում՝ <<ներդաշնակեցնելով ՀՀ ջրային օրենսգիրքը, դրան առնչվող իրավական ակտերը և ջրային ոլորտի ռազմավարությունը միմյանց հետ>>, աշխատանքային խումբը առաջարկում է՝

Ներկայացնել հաշվետվությամբ բերված առաջարկությունները նշված ժամանակացույցի 2-րդ կետի 5-րդ ենթակետի պատասխանատուներին (ՀՀ բնապահպանության ու ՀՀ ֆինանսների նախարարություններ, ՋՏՊԿ):

Հաշվի առնելով, այն հանգամանքը, որ առաջարկվող որոշ փոփոխություններ առնչվում են ՀԾԿՀ-ին, աշխատանքային խումբը առաջարկում է պատասխանատուների ցանկում ընդգրկել նաև ՀԾԿՀ-ին:

4. Սույն եզրակացության 2-րդ կետով առաջարկվող օրենսդրական ակտերի փոփոխություններով և լրացումներով պայմանավորված անհրաժեշտություն կառաջանա համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարել առնչվող ենթաօրենսդրական ակտերում (ՀՀ կառավարության 01.22.2004թ. N 130-Ն որոշում, ՀՀ կառավարության 05.09.2002թ. N 1400-Ն որոշմամբ հաստատված ՋՏՊԿ-ի կանոնադրություն, ՀԾԿՀ-ի որոշումներ և այլն):